ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՆԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/35 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
2	ԳՆՈՄՈՆ	ԳՆՈՄՈՆ	ԳՆՈՄՈՆ	Երևանի Ոսկերչական գործարան-1 ԳՆՈՄՈՆ ԲԲԸ	Բարեկամության շքանշանը (այսուհետ՝ շքանշան) պատրաստված է 925 հարգի արծաթի համաձուլվածքից (72,0 գր)՝ պատված բարձր հարգի ոսկով: Շքանշանի արտագծած շրջանագծի տրամագիծը 65 մմ է, հաստությունը՝ 4 մմ, այն ունի ուռուցիկ, հնգաթև խաչի տեսք, որի բոլոր թևերը դեպի կենտրոն ուռուցիկ են: Հնգաթև ուրվագծերի եզրային շերտերը պատված են 5 տարբեր գույների սառը արծնով՝ խորհրդանշելով աշխարհի 5 մայրցամաքները: Շքանշանի կենտրոնի կլոր հարթակը

					եզերված է ցորենի հասկերով: Հարթակի վերևի մասում կորաձև գրված է «ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ» բառը: Շքանշանի կենտրոնը եզերված է շղթայաձև նախշազարդով, որի կենտրոնական մասում երկրագնդի ֆոնին պատկերված է բարեկամության խորհրդանիշը՝ ձեռքսեղմումը: Կենտրոնական պատկերը պատված է տարալեզու գրերով (Միավորված ազգերի կազմակերպության 6 պաշտոնական լեզուներով), որոնք թարգմանաբար նշանակում են «Բարեկամություն»: Շքանշանը պատված է 999 հարգի ոսկով: Շքանշանը դարձերեսի կողմից համարակալված է: Շքանշանի շերտաձողը բաղկացած է երեք մասից՝ 24 մմ x 14 մմ չափերով շրջանակից, մուգ կարմիր, մեջտեղում՝ եռագույն զոլակով ժապավենապատ հիմքից և շքանշանի բնութագիրը կրկնող մանրակերտից: Շերտաձողի շրջանակը և մանրակերտը պատրաստվում են 925 հարգի արծաթից (1,5 գր) և ոսկեպատվում են 999 հարգի ոսկով: Շքանշանները պետք է համապատասխանեն

					«Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» ՀՀ օրենքով սահմանված նկարագրություններին և նմուշներին, լինեն մաքուր, առանց քերծվածքների կամ այլ հետքերի, դարձերեսի կողմից համարակալված (հերթական համարները կտրամադրվեն) և փաթեթավորված: Միատեսակ շքանշանները չպետք է տարբերվեն միմյանցից (չափերի տարբերությունը՝ ոչ ավել քան 0.1 մմ): Վերը նշված քաշերի թույլատրելի շեղումը՝ +/- 2%:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ОАО ЕЮЗ имени ЭМИЛЯ ГРИГОРЯНА в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՆԱ-ԷԱՃԱՊՁԲ-22/35 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
2					